

ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ



2024

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը



Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնայով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մադրում ենք հաջողություն:

1 Որտե՞ղ են զարգանում ծաղկավոր բույսերի փոշեհատիկները.

- 1) էնդոսպերմում
- 2) առէցների փոշանոթներում (փոշեբներում)
- 3) վարսանդի սերմնարանում
- 4) վարսանդի սռնակում

2 Որո՞նք են նախակորիզավորներ.

- 1) բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները
- 2) վիրուսները
- 3) սնկերը և բույսերը
- 4) նախակենդանիները

3 Ինչպե՞ս է իրականանում պլանարիայի շնչառությունը.

- 1) մարմնի մակերևույթով
- 2) բոքերով
- 3) խոհիկներով
- 4) տրախեաներով

4 Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների թերի կերպարանափոխությունը.

- 1) ձու, թրթուր, հասուն միջատ
- 2) հասուն միջատ, ձու, հարսնյակ, թրթուր
- 3) հասուն միջատ, թրթուր, ձու, հարսնյակ
- 4) ձու, հարսնյակ, հասուն միջատ

5 Ի՞նչ բաժիններ են տարրերում ձկների ողնաշարում.

- 1) իրանային և պոչային
- 2) պարանոցային, կրծքագոտկային, սրբանային և պոչային
- 3) պարանոցային, իրանային և պոչային
- 4) կրծքագոտկային և պոչային

6 Ի՞նչ է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) ժամանակավոր են
- 2) անհատական են
- 3) ժառանգվում են
- 4) ձեռքբերովի են

7

Մարդու գլխուղեղի մեծ կիսազնդերի կեղևի ո՞ր բլթում է գտնվում տեսողական գոտին.

- 1) քունքային
- 2) ճակատային
- 3) ծոծրակային
- 4) գագաթային

8

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում զգայական նեյրոնների մարմինները.

- 1) ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներում
- 2) տեսաթմբում, ողնուղեղի սպիտակ նյութում և առջևի արմատիկում
- 3) ողնուղեղից դուրս ողնուղեղային հանգույցներում
- 4) ողնուղեղի կողմնային եղջյուրներում և գործառող օրգաններում

9

Մարդու ո՞ր գեղձի հորմոնի անբավարությամբ է պայմանավորված լորձայտուց հիվանդությունը.

- 1) մակերիկամի կեղևային շերտի
- 2) ուրցագեղձի
- 3) մակերիկամի միջուկային շերտի
- 4) վահանաձև գեղձի

10

Ի՞նչն է նպաստում արյան դանդաղ մակարդմանը.

- 1) հեպարինի բացակայությունը
- 2) ցածր ջերմաստիճանը
- 3) Կ վիտամինի առկայությունը
- 4) կալցիումի իոնների մեծ խտությունը

11

Որտե՞ղ է մարդու սրտում գտնվում եռափեղկ փականը.

- 1) ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում
- 2) առրտայի ներսում
- 3) վերին սիներակի մուտքի հարևանությամբ
- 4) աջ նախասրտի և աջ փորոքի բացվածքի սահմանում

12

Ո՞ր հյուսվածքն է կազմում մարդու կմախքային մկանների հիմքը.

- 1) Միջածիգ գոլավոր մկանայինը
- 2) Էպիթելայինը
- 3) հարթ մկանայինը
- 4) շարակցականը

13

Ի՞նչն է կլլման ժամանակ կանխում սննդագնդիկի թափանցումը մարդու շնչափող.

- 1) Վահանաճառը
- 2) շնչափողի վերին աճառային կիսաօղակը
- 3) մակլոկորդը
- 4) լորձաբաղանքի ծալքերը

14

Ի՞նչ իիվանդություն է առաջանում A վիտամինի անբավարությունից.

- 1) հավկուրություն
- 2) ցինգա
- 3) ռախիտ
- 4) բերի-բերի

15

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում մազարմատները.

- 1) բուն մաշկում
- 2) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 3) վերնամաշկում
- 4) ենթամաշկային բջջանքում և էպիլերմիսի մահացած բջիջների շերտում

16

Ինչե՞րն են գտնվում մարդու երիկամի միջուկային շերտում.

- 1) երկշերտ պատիճները
- 2) պատիճը և բրգաձև կազմավորումը (փոքր բաժակը)
- 3) ծնկաձև և հավաքող խողովակները, առբերող և արտատար անոքների միջև գտնվող մազանոթային կծիկը
- 4) բրգաձև կազմավորումները (փոքր բաժակները)

17

Պասիվ տեղափոխություն է.

- 1) ցիտոզը
- 2) նյութերի տեղափոխությունը ցածր խտության տիրույթից դեպի բարձր խտության տիրույթ
- 3) նյութերի տեղափոխությունը բարձր խտության տիրույթից դեպի ցածր խտության տիրույթ
- 4) արտաքին էներգիայի հատուկ աղբյուր պահանջող նյութերի տեղափոխությունը

18

Նախակորիզավոր բջիջներում ռիբոսոմների ֆունկցիան է.

- 1) սպիտակուցի սինթեզը
- 2) ԱԵՖ-ի սինթեզը
- 3) նյութերի փոխադրումը
- 4) ֆոտոսինթեզը

19

Էռկարիոտիկ բջջում ԱԵՖ-ի սինթեզը հիմնականում տեղի է ունենում.

- 1) Գոլջիի ապարատում
- 2) միտոքոնդրիումներում
- 3) ռիբոսոմներում
- 4) էնդոպլազմային ցանցում

20

Ֆոտոսինթեզի լուսային փուլում ի՞նչ գործընթացներ է հրահրում արեգակնային ճառագայթման էներգիան.

- 1) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի առաջացում
- 2) ածխաջրերի առաջացում
- 3) մոլեկուլային թթվածնի և ածխաջրերի առաջացում
- 4) ածխաջրերի և ատոմային ջրածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ

21

Ո՞ր շարքում են թվարկված միայն միաշաքարներ.

- 1) գալակտոզը, գլիկոգենը, քսիլոզը
- 2) գլյուկոզը, ցելյուլոզը, ռիբոզը
- 3) ռիբոզը, դեզօքսիոնիբոզը, քսիլոզը
- 4) ֆրուկտոզը, ռիբոզը, օսլան

22

Ո՞ր շարքում է ճիշտ նշված ՌՆԹ-ի նույնականացման համարակալիքը?

- 1) թիմին - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) ուրացիլ - դեօքսիուրացիլ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) աղենին - դեօքսիուրացիլ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) ուրացիլ - ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ

23

Սիստմիկ բաժանման ո՞ր փուլում է վերականգնվում կորիզաքաղաքացիությունը.

- 1) մետաֆազում
- 2) պրոֆազում
- 3) թելոֆազում
- 4) անաֆազում

24

Ո՞րն է անսեռ բազմացման եղանակ.

- 1) բազմացումը բեղմնավորման միջոցով
- 2) պարթենոգենեզը
- 3) բողբոջմամբ բազմացումը
- 4) կոնյուգացիան

25

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) սեռական քրոմոսոմների նույն լրկուսներում գտնվող գեները
- 2) մեկ քրոմոսոմում գտնվող գեները
- 3) առատոսոմների տարբեր զույգերում գտնվող գեները
- 4) հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում գտնվող գեները

26

Ինչպես է կոչվում անհատական օրգանիզմի նոր հատկանիշներ ձեռք բերելու հատկությունը.

- 1) փոփոխականություն
- 2) գենոտիպ
- 3) ֆենոտիպ
- 4) ժառանգականություն

27

Ինչի՞ է հավասար դեղին գույնի հարք սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) իննի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

28

Ինչպիսի՞ ձևեր են առաջանում երկիետերոզիզոտ առանձնյակի և հոմոզիզոտ դոմինանտ առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելերով էլ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 2) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 3) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային
- 4) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային

29

Ինչո՞վ է պայմանավորված ցիտոպլազմային ժառանգականությունը.

- 1) կորիզի քրոմոսոմների գեներով
- 2) ցիտոպլազմայում գտնվող ռիբոսոմների ՌՆԹ-ի մոլեկուլներով
- 3) ցիտոպլազմա ներթափանցած վիրուսների գեներով
- 4) միտոքոնդրիումների կամ պլաստիդների գեներով

30

Ի՞նչ երևոյթ է լույսի ազդեցության տակ կարտոֆիլի պալարի կանաչելը.

- 1) սեղոնային փոփոխականություն
- 2) մուտացիոն փոփոխականություն
- 3) ադապտիվ փոփոխականություն
- 4) ոչ ադապտիվ փոփոխականություն

31

Ի՞նչ է ինվերսիան.

- 1) քրոմոսոմի հատվածի ձեռքբերում
- 2) քրոմոսոմի հատվածի պտույտ 180^0 -ով
- 3) հոմոլոգ գույզից մեկ քրոմոսոմի անհետացում
- 4) քրոմոսոմի հատվածի կորուստ

32

Սև առնետները, որոնք նախկինում ապրում էին Եվրոպայի բնակավայրերում, դուրս մղվեցին մոխրագույն առնետների կողմից: Սա փոխարարերությունների ո՞ր ձևն է.

- 1) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ
- 2) ներտեսակային գոյության կոիվ
- 3) ներտեսակային մրցակցություն
- 4) միջտեսակային գոյության կոիվ

33

Ո՞րն է իդիոադապտացիայի օրինակ.

- 1) ողնաշարավոր կենդանիների հնգամատ վերջույթների առաջացումը
- 2) ներքին բեղմնավորման ի հայտ գալը
- 3) կատվածկների մարմնի տափակացումը
- 4) երկենցաղների եռախորշ սրտի առաջացումը

34

Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) մթնոլորտային ճնշումը
- 2) քամին
- 3) զիշատչությունը
- 4) օրվա տևողությունը

35

Ի՞նչն է էկրիամակարգի առաջնային արտադրանքը.

- 1) էկրիամակարգի կենսազանգվածի առաջացման արագությունը
- 2) կոնսումենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 3) հետերոտրոֆների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 4) պրոդուցենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում

36

Ազոտի ո՞ր ձևը անմիջականորեն չեն կարող յուրացնել քույսերը.

- 1) NH_4^+
- 2) N_2
- 3) NO_3^-
- 4) NO_2^-

(37-38) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 13440 նուկլեոտիդներից, իսկ Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,4-ի:

37

Գտնել քիմինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1400
- 2) 1960
- 3) 3920
- 4) 2800

38

Գտնել ցիտոզինային նուկլեոտիդների քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1960
- 2) 3920
- 3) 1400
- 4) 2800

(39-40) Խաչասերել են աաBBCcDdEeFf x AaBbCCDDeeFf գենոտիպերով առանձնյակներ: Ալելային գեների առաջին երկու զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին չորսում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

39 Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 32
- 2) 96
- 3) 48
- 4) 64

40 Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 32
- 2) 48
- 3) 24
- 4) 96

41

Մարդու արյան ո՞ր ձևավոր տարրին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Ձևավոր տարր

- | | |
|---|--------------|
| A. ընդունակ է ֆազոցիտոզի | 1. լեյկոցիտ |
| B. չափսերով ամենափոքրն է | 2. էրիթրոցիտ |
| C. իրականացնում է գազերի փոխադրումը | 3. թրոմբոցիտ |
| D. կյանքի տևողությունը 120-130 օր է | |
| E. քայլայման ժամանակ անջատվում է նյութ, որը մասնակցում է ֆիբրինի առաջացմանը | |
| F. պարունակում է հեմոգլոբին | |
| G. ունի երկու կողմից ներհրված սկավառակի տեսք | |

42

Մարդու ո՞ր ոսկորը (նշված է ձախ սյունակում) կմախքի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օսկոր

- A. բազկոսկը
- B. կող
- C. թիակ
- D. կոնքոսկը
- E. փոքր ոլոր
- F. արմունկոսկը
- G. կրծոսկը
- H. անրակ

Կմախքի բաժին

- 1. ստորին ազատ վերջույթ
- 2. ստորին վերջույթի գոտի
- 3. վերին ազատ վերջույթ
- 4. իրան
- 5. վերին վերջույթի գոտի

43

Սաղմնային գարզացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

Սաղմնային թերթիկ

- A. մկան
- B. խորիկների էպիթել
- C. ատամների էմալ
- D. սեռական գեղա
- E. մարսողական գեղա
- F. մաշկի էպիթել
- G. բորերի էպիթել

1. էնտոդերմ
2. մեզոդերմ
3. էկտոդերմ

44

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

Տեսակի չափանիշ

- A. առանձնյակներն ունեն ներքին և արտաքին կառուցվածքների նմանություն
- B. նույն տեսակի առանձնյակների ԴՆԹ-ն կոդավորում է միանման սպիտակուցներ
- C. առանձնյակների կենսագործունեության գործընթացների նմանություն
- D. քրոմոսոմների քանակի, ձևի, չափսերի նմանություն
- E. տեսակը գոյատևում է միջավայրի միայն որոշակի պայմաններում
- F. յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում է խիստ որոշակի արեալ

1. գենետիկական
2. ֆիզիոլոգիական
3. ձևաբանական
4. կենսաքիմիական
5. աշխարհագրական
6. էկոլոգիական

45

Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմներին (նշված է աջ մասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

- A. բջիջներն ունեն քլորոպլաստներ
- B. էկոհամակարգում ռեդուցենտների դեր են կատարում
- C. բջջապատի հիմնական նյութը խիտինն է
- D. էկոհամակարգում պրոդուցենտների դեր են կատարում
- E. ունեն հետերոտրոֆ սննդառություն
- F. արտազատում են միզանյութ
- G. բջիջներում գլիկոզեն է կուտակվում

Օրգանիզմներ

- 1. բույսեր
- 2. սնկեր

46

Ի՞նչ հաջորդականությամբ են ընթանում սպերմատոզոֆիի զարգացման արոցեսները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սպերմատոզոփիների ձևավորում
2. 2n4c հավաքակազմով բջիջների առաջացում
3. սպերմատոզոնիումների բաժանում միտոզի եղանակով
4. սպերմատիփիների առաջացում
5. երկու հավլոփի բջիջների առաջացում
6. սպերմատոզոնիումների թվի ավելացում

47

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում արոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բջջաբաղանքի «լուծում»
2. նոր բակտերիաֆագերի ձևավորում
3. բակտերիաֆագի $\text{T}_{\text{Ն}}\text{I}\text{D}$ -ի սինթեզ
4. բակտերիայի ոչնչացում
5. բակտերիաֆագի $\text{T}_{\text{Ն}}\text{I}\text{D}$ -ի ներարկում բակտերիայի մեջ
6. արչային ելունների ամրացում բջջաբաղանքին
7. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ

48

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը բույսերի օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ.

1. ամինաթթուների միջև պեպտիդային կապերի առաջացում
2. հիդրոֆոք և -S-S- կովալենտ կապերի առաջացում
3. սպիտակուցի տարածական կառուցվածքի առաջացում
4. ջրի և անօրգանական աղերի ներծծում արմատի միջոցով
5. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
6. ամինաթթուների սինթեզ՝ անօրգանական նյութերից

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում միջավայրի բարձր ջերմաստիճանի պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ջերմակարգավորման կենտրոնի դրդում
2. մաշկ մղվող արյան ծավալի ավելացում
3. արտաքին միջավայրի ջերմաստիճանի բարձրացում
4. քրտնարտադրության ուժեղացում
5. մաշկի արյունատար անորների լայնացում
6. ջերմատվության ուժեղացում
7. մաշկի ջերմային ընկալիչների դրդում

50

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունն անցնում մարդու արյունատար համակարգի բաժիններ՝ սկսած սրտի աջ փորոքից արտամղման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բոքային երակ
2. սիներակ
3. ձախ նախասիրտ
4. բոքային զարկերակ
5. բոքաբշտերը պատող մազանոքներ
6. բոքային ցողուն
7. աջ փորոք

51

Ո՞րն է կաթնասունների ողնաշարի բաժինների ճիշտ հաջորդականությունը՝ սկսած պարանոցային բաժնից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սրբանային
2. կրծքային
3. գոտկային
4. պոչային
5. պարանոցային

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. քոչունները, սողունները օժտված են արական հոմոզամետությամբ
2. տրամախաչման շնորհիվ առաջանում են գեների նոր զուգակցություններ, որի արդյունքում սերնդում առանձնյակների ժառանգական հատկությունների նույնականությունը ծնողական առանձնյակի ժառանգական հատկությունների հետ ավելի է մեծանում
3. տրամախաչումը տեղի է ունենում մեյոզի առաջին բաժանման պրոֆազում կոնյուգացիայի ընթացքում
4. ♀. Սենդելի երկրորդ օրենքը կոչվում է նաև դոմինանտման օրենք
5. համաձայն Թ.Մորգանի՝ պտղաճանճի երկինտերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում առաջին սերնդում ստացվում է միակերպություն
6. գերդոմինանտության դեպքում հետերոզիզոտ (Աա) վիճակում դոմինանտ հատկանիշն ավելի ցայտուն է դրսևորվում, քան հոմոզիզոտ դոմինանտ (ԱԱ) գենոտիպի դեպքում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նուկլեոտիդների մեկ եռյակը կարող է կոդավորել 1-6 ամինաթթուների
2. բջիջների մեծ մասում ցիտոպլազմայի ռեակցիան թույլ հիմնային է, որը պայմանավորված է բջջում առկա ջրի մոլեկուլների դիպոլային հատկություններով
3. մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ ցածր խտություն՝ սարկոպլազմային ցանցի շնորհիվ
4. գլյուկոզի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման արդյունքում անջատվում է $150 \text{ կ}.\Omega/\text{մոլ}$ էներգիա, որի մեծ մասը (60 %) պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
5. բարձրակարգ բույսերի բջիջներում բացակայում է բջջային կենտրոնը
6. շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում

54

Մարդու ենթաստամոքսային գեղձին վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Ենթաստամոքսային գեղձը տեղակայված է գոտևային երկրորդ ռդի մակարդակում
2. Ենթաստամոքսային գեղձի հյութն անգույն է և օժտված է թթվային հատկությամբ
3. Ենթաստամոքսային գեղձը խառը գեղձ է, որն արտազատում է մարտողական հյութեր և արյան մեջ ներզատում է գլյուկազոն հորմոնը
4. Ենթաստամոքսային գեղձի արտատար ծորանը բացվում է բարակ աղու վերջնամասում
5. Ենթաստամոքսային գեղձը կազմված է գլխիկից, մարմնից և պոչից
6. Ենթաստամոքսային գեղձն արտադրում է սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերը, նուկլեինաքրուները ճեղքող ֆերմենտներ

55

Նշել բոչուններին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. ձախ փորոքից դուրս է գալիս առտայի ձախ աղեղը
2. կտուցի ձևը համապատասխանում է սննման առանձնահատկություններին
3. կողերը կրծոսկրին միացած են անշարժ
4. սիրտը քառախորշ է
5. ողնաշարը կազմված է հիմք բաժիններից
6. կրծքի մեծ մկանները մասնակցում են թևերի իջեցմանը
7. կրծկաթաքն առաջացել է նախաբազկի մի քանի ոսկրերի միաձուլումից

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ամենսալիզմը միջտեսակային փոխարաբերությունների ձև է, որի դեպքում մի տեսակն օգտագործում է մյուսի ներկայացուցիչներին որպես սննդի աղբյուր և հաճախ նաև որպես բնակության միջավայր
2. բնական ընտրությունն ուղղորդում է էվոլյուցիային
3. միկրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
4. միմիկրիա է կոչվում հարմարվածության այն տեսակը, երբ կենդանու մարմնի գունավորումը նման է շրջապատի գույներին
5. կայունացնող ընտրության դեպքում պոպուլյացիայի գենոֆոնդը չի փոփոխվում
6. ազուրենոզներում խախտված է բնական հավասարակշռությունը, նյութերի շրջապատույթը
7. նավթը, հողը, կրային ապարները դասվում են հանքային նյութերի շարքին

57

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. Վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ բաժնի գրգռումն ուժեղացնում է արտենալինի արտադրությունը
2. ականջի և աչքի ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են երկարավուն ուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաքանի համապատասխան կենտրոններ
3. միջին ուղեղը ապահովում է կմախչի մկանների լարվածությունը
4. հոտառության ընկալիչները տեղակայված են քրի խոռոչի վերին հատվածում և ըստ բնույթի քիմընկալիչներ են
5. սրտի աշխատանքը դանդաղեցնում են ացետիլխոտինը և կալիումի իոնները
6. արիեստական ակտիվ իմունիտետը ձևավորվում է բուժիչ շիճուկի ներարկման արդյունքում

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. հատկանիշի մողիֆիկացիոն փոփոխականության սահմաններն անվանում են նրա ռեակցիայի նորմա
2. X քրոմոսոմը կոչվում է իզական քրոմոսոմ
3. գուազի ձկնիկի պոչալողակի գունավորումը X քրոմոսոմի հետ շղթայակցված հատկանիշ է
4. հիբրիդների առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, երբ ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
5. ասիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ
6. միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունը հիմնականում համակցական փոփոխականության արդյունք է

(59-60) Զերմանառազայթմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 60%-ը, իսկ գոլորշիացմամբ՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսից գոլորշացել է 300 գրամ քրտինք:

59

Քանի՞ Զոու էներգիա հեռացավ օրգանիզմից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

60

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմանառազայթմամբ:

- (61-62) Օրվա ընթացքում մարդն արթուն է եղել 14 ժամ և ծանր ֆիզիկական աշխատանք է կատարել 4 ժամ: Ընդունել, որ ֆիզիկական աշխատանքի ընթացքում շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,05 անգամ, և օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն ավելացել է 25%-ով:
Հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

61

Զանի^o լիտր թթվածին է ներշնչել մարդը հարաբերական հանգստի վիճակում:

62

Զանի^o լիտր թթվածին է յուրացրել օրգանիզմն աշխատանք կատարելիս:

(63-64) 1 մոլ գազը զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: 70 մ² տերևային մակերևույթ ունեցող ծառը 30 օրվա ընթացքում 16-ժամյա լուսային օրվա պայմաններում՝

63 Զանի՞ լիտր քրվածին է արտադրել այդ ընթացքում:

64 Զանի՞ լիտր CO₂ է կլանել այդ ընթացքում:

(65-66) Գլուկոզի մեղքան պրոցեսում օգտագործվել է 36 մոլ O_2 , և առաջացել է 268 մոլ H_2O :

65 Քանի՞ մոլ կաթնաբթու է մնացել այդ ընթացքում:

66 Քանի՞ մոլ CH_4 է առաջացել այդ ընթացքում:

- (67-68) Փոքր լճակում ձկան քանակը որոշելու համար բռնվել է 3000 ձուկ, նշվել և նորից բաց թողնվել լիճ: Որոշ ժամանակ անց բռնվել է 2000 ձուկ, որոնցից 2,5%-ը նշված էին:

67

Զանի^o հազար առանձնյակ են միավորված տվյալ պոպուլյացիայում:

68

Որոշել տվյալ պոպուլյացիայի խտությունը (առանձ/ m^3 -ով), եթե լճի ծավալը 800 m^3 է:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. խոսելիս ձայնալարերը մոտենում են միմյանց
2. օքսիհեմոգլոբինն առաջանում է արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներով հոսող արյան էրիթրոցիտներում
3. շնչառական համակարգի աշխատանքը կարգավորող կենտրոնները գտնվում են երկարավուն ուղեղում, ուղեղիկում, մեծ կիսագնդերի կեղևում
4. միջկողային մկանների կծկման ժամանակ կողոսկրերը բարձրանում են
5. բոքերը կրծքավանդակին միացնող մկանների կծկման շնորհիվ բոքերը հետևում են կրծքավանդակի պատերին, և տեղի է ունենում ներշնչում
6. բոքերը պատված են հարթ մկանային հյուսվածքի միաշերտ թաղանթով, որը նպաստում է բոքերի կծկմանը և ընդարձակմանը

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. կորիզաթաղանթը կազմված է երկու թաղանթից, որոնց միջև կա կիսահեղուկ նյութով լցված տարածք
2. բջջակորիզը բջջի ամենափոքր օրգանոիդն է. այն առկա է բոլոր կենդանի օրգանիզմների բջիջներում
3. չնայած, որ կաթնասունների էրիթրոցիտներում կորիզ կա, դրանք պրոկարիոտ բջիջներ են
4. կորիզահյութն իր քիմիական կազմով տարբերվում է ցիտոպլազմայից
5. քրոմատինը Դ-Ն-Ը-ի, ի-Ը-Ն-Ը-ի, փ- Ը-Ն-Ը-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների բարդ համալիր է
6. կորիզաթաղանթը և կորիզակները տեսանելի են միայն բաժանվող բջիջներում